

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԴԱԼԱՏԸ IRZ-Ի ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՏՐԱՍՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ «ՓԱՍՏԱԲԱՆԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱԴԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ

20.08.2020 10:43



Հարգելի՛ փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հետ համատեղ կազմակերպում է փաստաբանների վերապատրաստման առցանց դասընթաց՝ **«Փաստաբանը և հանրային կապերը»** թեմայով:

Վերապատրաստման դասընթացի շրջանակներում գեկույցներով հանդես են գալու **գերմանացի փորձագետներ՝ փաստաբան և լրագրող Ուլրիխ Հերմանսկին** և **փաստաբան դոկտոր Ստեֆանի Քուլնցը**, ինչպես նաև **ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանը**:

Դասընթացը կազմակերպվում է երկու անգամ (նույն օրակարգը 2 օր)՝ 2020 թվականի օգոստոսի 24-ին և 25-ին, ժամը 11:30-ից 16:30-ն:

Դասընթացն անցկացվելու է վերապատրաստման հատուկ առցանց համակարգով՝ հայերեն և գերմաներեն լեզուների համաժամանակյա թարգմանությամբ:

Դասընթացին մասնակցությունը յուրաքանչյուր փաստաբանի համար կհաշվարկվի 8 (ութ) ակադեմիական ժամ վերապատրաստում:

Դասընթացի յուրաքանչյուր օրվան (24.08.2020թ. և 25.08.2020թ.) կարող են մասնակցել **ոչ ավել, քան 40 (քառասուն) փաստաբան:** Նախապատվությունը կտրվի դասընթացին ավելի վաղ գրացված փաստաբաններին: Դասընթացին գրանցվելու համար կարող եք էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկել **ani.gharibyan@advocates.am էլ. հասցեին՝** նշելով Ձեր անունը, ազգանունը, արտոնագրի համարը և դասընթացի օրը:



ՈՆՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ԳՐԱՆՑՎԵԼ, ԵՔԵ ՎՍՏԱՀ ԵՔ, ՈՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԴՐԱՆ ԺԱՄԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԱՄՐՈՂՁ ԾԱՎԱԼՈՎ:

Առդիր՝ դասընթացի օրակարգը

Առաջարկվող նորություններ



21.01.2016 ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է
ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՓՈՐՁԻ
ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ



05.09.2016
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐՁԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ



05.09.2016
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ՝ ԼՈՌՈՒ ՄԱՐՁԻ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



05.09.2016
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐՁԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```